

ՊԸՇՏՈՆԱԿԱՆ ԲԸԺԻՆ

ՔԱՂԱՌԱԾԻ ՍԵՆՕՒԻ ՕՐԱԳՐԱԹԻԲՆԵՐԻՅ.

17 յուլ. Սինօզը շրջարեւական հրամանով պատուիրում է Հայոց Կանսիստորիաներին՝ ըստ կանոնի ս. Աթանասի Գլ. Ժ. 5 մատուցանել ս. պատարագ անձնասպանների վերայ և թաշղել նոցա եկեղեցական կարգով, եթէ միայն բժշկական քննութեամբ ի յայտ գայ՝ որ անձնասպանը սճիր զործելու ժամանակ եղել է խելայեղ վիճակի մէջ:

29 յուլ. Սինօզը պատուիրում է Տրի-խիսի Կանսիստորիային թողնել Ղևոնդ քահանայ Սարգսեանցին միաբան և կատարող հոգևոր պիտոյից ծիրանաւորի ս. Աստուածածին եկեղեցւոյ՝ տալով նորան ամսական 15 ս. իսկ Ներսիսեան Դպրանոցի հոգարար-ձութեանը թոյլ տալ կարգել իր կողմից ներկայացուցիչ հսկելու ու խտաանեղոյ արդիւնքի վերայ, մինչև Սինօզի նոր անօրէնութիւնը: Ապա, Ղևոնդ քահանայի անվայել արարմանց համար նշանակել քննիչ և հետեանքը զեկուցանել Սինօզին:

29 յուլ. Սինօզը պատուիրում է Արցախի թեմի Կանսիստորիային ցոյց տալ Նլխաւեստապոլի նահանգական դատարանի նախագահին, վերջնայ խնդրանոց համաձայն, նոյն թեմի վանքերից մի յարմարը որանոց պիտի ապաշխարեն անչափահաս յանցաւորները:

31 յուլ. Սինօզը, ըստ միջնորդութեան Աստրախանի թեմի Առաջնորդի՝ խնդրում է Ներքին զործոց նախարարութեան, թոյլ տալ նորան հոգալու Սիրիիայում բնակուող հայ լուսաւորչականաց հոգևոր պետքերը:

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԸԺԻՆ

ԱՆԱՊԵԿԱՆ և ԱՆԿՈՂՈՊՏԵԼԻ ԳԱՆՁԸ:

«Մի գանձեք մեզ գանձս յերի, որ ցից ևս ուրիճ ապականեն, ևս որ գոյ՛ ախան հասանեն ևս զոյանան. այլ գանձեցեք մեզ գանձս յերկինս, որ ո՛չ ցից ևս ո՛չ ուրիճ ապականեն, ևս ո՛չ գոյ՛ ախան հասանեն ևս զոյանան, զի որ գանձք մեր են, սեղ ևս սիրք մեր լիցին»:

Մատթ. 2. 19—21:



ԱՐՅՆԷ ԹՈՂ ՈՐԵՄՆ ԱՄԷՆ ՈՔ ԻՆՔՆ ԻՐԵՆ՝ ՈՐ Է ԻՄ ՍԻՐԱՐ, և պարզ կլինի այն ժամանակ նորա համար, թէ ինչպիսի գանձեր է ժողովել և ինչ չափով: Իսկ եթէ կամենում ենք մի ամբողջ ժողովուրդ հարըստութեան տեսակը և չափը որոշել՝ հարցնենք, ո՞ւր է նորա երիտասարդ, յառաջադէմ առաւելագէտ սրտի մղումներով զեկավարուող դասի սիրաւը—Խեղճ է և ողորմելի հարկաւ այն անհատը կամ ժողովուրդը, որի մէջ թմրած է իսպառ գանձեր ժողովելու և իւր կեանքը ճոխացնելու ցանկութիւնը, այդ ցանկութիւնը բնական է բոլոր մարդոց համար, և առանց նորան մենք վայրի կենդանիների կամ թըռչունների վիճակի մէջ կլինէինք, զիտութեան և արուեստի արտադրած մեծամեծ բարիքներից զուրկ՝ ազբատ հոգեպէս և մարմնապէս Հոյ ժողովրդի մասին չի կարելի ասել, թէ նա թմրած ու ծոյլ ժողովուրդ է, յառաջ ննտուելու, քրտինքի գնով է թէ մտքի հրնարազխտութեամբ՝ հարստութիւններ ժողովելու ձգտումը նոյնչափ զօրեղ է նորա մէջ, որչափ և որ և է քաղաքակրթութեամբ ազդի մէջ. հարց է միայն թէ, ինչպիսի ուղղութիւն է ստանում այդ ձգտումը մեր ներկայ դարում՝ ո՞ւր է մեր երիտասարդ սերունդի

սիրաբը, ինչպիսիք գանձեր ժողովելու հակամէտ: Դրէք այդ հարցը մի աշխարհ ելած, հասարակական ասպարիզի վերայ յառաջ նետուող երիտասարդի առաջ, հարցրէք՝ ի՞նչ բարիքներ ի հասկացից է նա ընկած, երկինքի համար է արդեօք գանձեր ժողովում թէ այս երկրի համար: «ուր ցեց և ուտի՞՞...»: և նա անշուշտ կպատասխանէ ձեզ հեղինական ժպիտով. մենք երկրի վերայ ենք ապրում, երկրի գանձերը մե՛զ առէք՝ երկինքը թող ձեզ լինի...: Եւ հանաք չէ, նորա տաածը, նա համոզուած է, որ խիստ խելօք բան է ստում՝ ժամանակակից գիտութեան ու հանճարի ուժով ճշգրտած և հաստատուած մի ճշմարտութիւն:

Երկինք ... ուր է երկինքը: Մի ժամանակ մարդիկ կարծում էին թէ այն կապոյտ կամարը մեր գլխից վերև մի ամուր աստիարակ տեղ է, ուր մեզինք աւելի զօրեղ և մաքուր էակներ են ապրում և ուր մահից յետոյ շարունակուել կարող է նաև մեր այս երկրի վերայ սկսած կեանքը՝ աւելի հանգիստ և երջանիկ կերպով: Բայց մարդիկ լուսաւորուեցան, հեռագիտակներ շինեցին և տեսան, որ ոչ մի կամար չկայ վերևում՝ ամենասուր տեսողութիւնն անգամ կորչում է հեռուն անասման տարածութեան մէջ, և այն պարզուէն ասողերը մի երևակայեալ երկնակամարի զարդերը չեն, այլ նոյն անհուն տարածութեան մէջ ցրուած ահագին զանգուածներ, որոնցից իւրաքանչիւրը գուցէ, տասնեակ և հարիւրաւոր նոյնպիսի փոքրիկ գնտեր է պատեցնում իւր շուրջը, որպիսին մեր երկիրն է: Եւ ահա այն մարդը, որ առաջ երկրից գուրս ոչ մի աշխարհ չէր ճանաչում, այնպէս էր կարծում թէ ինքն ու իւր փոքրիկ հողագունդն են ամբողջ տիեզերքի կեդրոնը—և այնուամենայնիւ այստեղ եղած կեանքով չէր բաւականանում՝ այժմ, երբ իմացել է, թէ ինչպիսի խեղճ սահմանների մէջ է ամփոփուած այդ կեանքը, կարծես թէ մի նոր առանձին սեր և հաճոյք է զգում գէպի այն, կարծես թէ համեստացել՝ աշխատում է քով բաւականանալ, և երևակայականը թողած՝ իրականի մէջ որսնել իւր բազդը: Սակայն ճշմարիտ է արդեօք, որ մենք համեստութիւնից զրոգուած երկրաւոր բարեբանների սահմանից ել-

նել չենք կամենում: Ճշմարիտ է, որ այդ սահմանից գուրս ոչինչ չկայ իրական և ցանկալի, որ երկինքի մասին մեր բոլոր լսածները նոյնպիսի երևակայական ու ինքնաստեղծ բաներ են, ինչպէս նոյն ինքն իրրե երկինք երևակայած կամարը, և որ ուրեմն մեզ ուրիշ ոչինչ չէ մնում բայց ի՞նչ, այս երկրի վերայ գանձեր ժողովել՝ իմանալով հանդերձ, որ ցեցն ու ուտի՞՞ք պէտք է փչացնեն և գողերը կտրեն այն և գողանան:

Խեղճ ու մոլորուած մարդիկ մենք քանզում ենք այն ինչ որ ինքնեքս էինք շինել, և մեզն ուրիշ վերայ ենք ձգում: Մենք չենք մտածում թէ եթէ իսկական երկինքը մեր երևակայած այն աստիարակ տարածութիւնը լինէր՝ այլևս երկինք չէր լինի, այլ մեր երկրի պէս մի բան, ուր անպակաս պէտք է լինէին ցեցն ու գողը մեր ժողոված գանձերի համար: —Իրօք ասրեր է բողբոլին այն երկինքը, որի մասին մեր Փրկիչն է խօսում՝ որից Ծա եկել և գէպի ուր առաջնորդել էր կամենում: Ծա չի ստում թէ մահից յետոյ միայն մենք երկինք գնալ կարող ենք, այլ սովորեցնում է մեր ամենօրեայ աղօթքի մէջ խնդրել Ասարծուն, որ մեր այս կոշտ երկիրն ինքնին երկինք դառնայ մեզ համար, որ մենք կարող լինինք ազրել այստեղ, ինչպէս երկնքում են ապրում և մեր կատարած իւրաքանչիւր գործն երկրնքի գործ լինի, որ մենք շարժենք ամէն բոլոր այնպէս, իրրե թէ երկինքը մեր ձեռքի տակ լինէր՝ յա՛խանական բարեաց մի շտեմարան ներկայացնէր, և մենք ժողովէինք այնտեղ մեր երկրաւոր կեանքի գնով ձեռք բերած պատուական մարգարիտները՝ մնայուն, նիւթական օրէնքների աղգեցութեան շինթարկուող և բարոյական կեանքի համար յա՛խանական արժէք ունեցող գանձերը: Որո՞նք են այդ գանձերը և զոյս թիւն ունի՞ն նոքա— առաքինի և աւետարանի լուսով պայծառացած հոգու համար կասկածի առարկայ չէ դա ամենեին. մեր ներքին ճանաչողութիւնը մեզ ստում է, որ մարդիկ իրենց ոչնչութեամբ և անպականացու բնութեամբ հանդերձ՝ ընդունակ են այնպիսի մաքուր զգացումներ և վեհ գաղափարներ ունենալու, այնպիսի գեղեցիկ գործեր կատարելու և հոգեւոր ու բարոյական

կեանք անուցանելու, որոնք անապական են ի բնէ, որոնց համար անկարելի է ենթադրել թէ կցնդին ու կանչեաանան մի օր ինչպէս սոցա ժամանակաւոր բնակարան դարձած ապականացու մարմին հիւլէնները:

Մարդոց հասարկութեան մասին մեզադրական ծառեր ասելը խիստ սովորական է. իւրաքանչիւր ոք իւր անձի վերայ տեսնում է և ուրիշների ճակատին կարգում թէ մարդկային գործողութիւնների գոնէ մեծագոյն մասի միոյ գործութիւնը հասկան զգացումն է և աշխարհում եղած շարիքների մեծագոյն մասն այդ զգացումից է յտաջ գալիս: Սակայն եթէ լաւ քննենք և աւելի խորը զիտենք՝ մի՞թէ մենք յիրաւի այնչափ աշխատում ենք մեր նւ-ի համար, որչափ թըւում է:—Որ մեր մարմնի համար աշխատում ենք՝ դորան խօսք չկայ, մենք հոգ ենք տանում որ անվնաս մնայ մեր աչքը, մեր ձեռքը, մեր ոտքը՝ որ մեր ամբողջ մարմինը ներքուստ ըստ կարելւոյն պարարտ և հաճելի տնունդ սաանայ և արտաքուստ ամէն պատահարներից պաշտպանուած լինի, բայց այդ բոլորը դեռ մեր իսկական նւ-ը չէ՝ մարմնի շարժումներին ղեկավարող և իւր առանձին անկախ կեանքով տալիս այն միապաղաղ էութիւնը, որ մեզ համար ամէն ինչ է և որի մասին մենք այնչափ քիչ ենք մտածում: Ընդհակառակն նաև այն գէպքում, երբ խօսքը բարոյական կեանքի և բարոյական պարտականութիւնների մասին է՝ մենք սովորաբար մտածում և խօսում ենք թէ ինչպէս պէտք է սիրենք մեր ընկերին՝ ինչ օգնութիւն հասցնենք նորան, բայց գէպի մեր սեփական տնձն ունեցած բարոյական պարտականութիւնների մասին զրեթէ ամենին չենք յիշում՝ աշխատում ենք խոյս տալ այն մտքից թէ ինչ պէտք է լինի մեր վերջն այն ժամանակ, երբ աչքը տեսնելուց ձեռքը դործելուց, ոտքը շրջելուց կզաղարէ: Ուրեմն մեր հասկան զգացումն անզամ՝ այդ նախնական և ամենագորեղ զգացումը մեր մէջ, ինչպէս և առհասարակ մեր միւս բնական զգացումները՝ ժամանակի ընթացքում կորցնում է իւր ճշմարիտ բնուորութիւնը և այլասեռում: Մենք փոխանակ բուն նւ-ի պահպանութեան

և զարգացման համար աշխատելու՝ բոլոր ուշադրութիւնը դարձնում ենք այն միջոցների վերայ, որոնք կարեւոր են նւ-ի պահպանութեան համար, և այսպէս անցնելով մի միջոցից դէպի միւսը՝ կեանքի նպատակ ենք դարձնում վերջապէս այնպիսի գանձեր ժողովելը, որոնք մեր բուն նւ-ին կամ ժամանակաւոր կողմնակի ծառայութիւն են մատուցանում կամ ոչինչ ծառայութիւն մինչդեռ եթէ մեր բնածին զգացումն իւր բնական վիճակի մէջ մնար և բարոյապէս կրթութուէր՝ պէտք է ձգտէր անշուշտ այնպիսի անապական և անկողոպտելի գանձեր միայն ժողովելու, որոնք մեր յաւիտենական գոյութիւնն ու կեանքն ապահովում են:

Այսպէս մտածելով մենք անհրաժեշտաբար այն կարևորութեանը կգանք, որ մեր Փրկչի պատուէրը թէ երկրաւոր ապականացու գանձեր մի՛ ժողովէր, այլ երկնայինն ու անապականը՝ մեր կեանքի ղլխաւոր առաջնորդող սկզբունքներից մէկը պէտք է լինի. ոչ միայն նորա համար, որ յաւիտենական պաշարը միջոց կտայ մեզ յաւիտենական կեանք վայելելու, այլ որ նաև մեր այս ժամանակակից կենցաղի մէջ միակ արժէք ունեցողն ու իսկական հարստութիւնը այդպիսի գանձերն են:—Ո՛ւմ յայտնի չէ, որ միայն ըստ երեւութին արտաքին հարստութիւնները բարձրացնում են մարդու արժէքն այս աշխարհում որ արտաքին փողը առժամանակ միայն շլացնում է մարդոց, և մենք՝ շահախնդիր և արտաքինով հրապուրուող մարդիկս, այնուամենայնիւ իրօք գնահատելի կարող ենք միայն ներքին արժանաւորութիւնները՝ հոգու բարձր անկողոպտելի յաւիտութիւնները և սրտի անապական առաքինութիւնները: Որչափ և իշխէ մէկի մէջ ոսկու, անաշխատ կերպիւ ձեռք բերուած փողքի և զօրութեան անյադ տենչը՝ այնուամենայնիւ բոպէներ գոնէ կլինին, երբ նա զգում է, որ իսկական գանձեր չեն դրքա իր համար, որ ահա ցեցն ու ուտիճը կապականեն, զողեր կգան կզոզանան, և մենք կմնանք մերի ու անօգնական, եթէ մեր հոգւոյ ներսը մի անկողոպտելի պաշար չունինք նեղ օրուայ համար: Ծառերն աշխատում են խեղդել այդ զգացումը և դորանով ամենավատթար ան-

ձնասպանու թիւնն են գործու մ՝ թաղում են
 գեանի տակ այն գանձը որի շահեցնելը մեր
 կեանքի միակ խորհուրդը պէտք է լինի—գեպի
 մեր անձն ունեցած սրբազան պարտականու-
 թիւնները կատարելու, բայց և մեր ընկերին
 օգնելու: Ճշմարիտ եղբայրասիրտ թեամբ նորա
 բարոյական զարգացման նպաստելու անհրա-
 ժեշտ պայմանը: Որպէս զի մենք շրջապատողնե-
 րի վերայ բարերար ազդեցութիւն ունենանք,
 նոցա հոգեւոր և բարոյական զարգացմանը նը-
 պաստենք՝ հարկաւոր է որ նախ ինքներս հոգե-
 պէս և բարոյապէս ճոխացած լինինք: Այն ան-
 ձը որի կուրծքը լի է երկնքի համար պատրաս-
 տած հոգեւոր գանձերով և որի ձակաթին առա-
 քինութեան դրոշմն է փայլում՝ առանց իւր
 կամքի իսկ բարոյական և երկնային կեանքի
 հրապոյրը սփռում է իւր շուրջ և իւրաքան-
 չիւր հանդիպողի համար բարերար և դաս-
 տիարակ հանդիսանում: մինչդեռ բարոյապէս
 աղքատը որչափ և ձգտումն ունենայ ու հե-
 տամուտ լինի ամէնքին բարիք անելու՝ ամբողջ
 մարդկութիւնը բողբուռեղնելու: նորա ջան-
 քնն ապարդիւն պէտք է անցնի, որովհետեւ
 ուրիշին սալ կարող ենք մենք այն միայն
 ինչ որ ինքներս ունինք:

Աշխատենք ուրեմն ունենալ, ոչ մի ջանք
 և զոհողութիւն չլինայինք այնպիսի գանձեր
 ժողովելու համար որ ոչ ցեց և ոչ ուտիճ
 ապականեն և ոչ զողք ական հասանեն և
 գողանան» որպէս զի երբէք արտաքին օգնու-
 թեան կարօտ չլինինք և կարողանանք միշտ
 կատարել մեր սիրոյ պարտքը գեպի ընկերը.
 որպէս զի նաև այն ժամանակ, երբ ամէն ինչ
 կիլնն մեզանից, երբ մեր սեփական աչքն ու
 ձեռքն անգամ մերն անուանել և ըստ մեր
 հաճոյից գործ գնել չենք կարող՝ ունենանք
 այնուամենայնիւ մի բարիք, մի գանձ, որ ոչ
 ոք մեզանից չպէտք է խլի, որը շարակած պիտ
 համարձակուենք գեպի երկնքի դուռը դիմելու
 և անօգտա երանութեան կեանքը գնելու:



Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ն

ԵԻ

ԱՂ. ԲԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ.

Գ.

ԱՂ. ԲԱՏՆԵՐԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸ ԵՒ ՈՊԱՅՈՒՄ.

I.

Ներքին առաւելումներն և արտաքին հարե-
 քներն:

(Շարունակորիմ և Վեջ) *

II.

ԱՂ. ԲԱՏՆԵՐԻ ԱՐԴԻ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ.

Ներկայ դարու քրիստոնեական բարե-
 գործութեան և հաստատութիւնների մասին
 խօսելուց յետոյ՝ այն հատուածի մէջ աշխա-
 տենք աղքատների բուն արդի խնամատարու-
 թեան մասին մի համառօտ գաղափար տալ:

Աղքատների խնամատարութիւնն այժմ
 երեք սիւսեմի է բաժանուում. պետական, ան-
 ձնական կամ աղատակամ և եկեղեցական:
 Պետական խնամատարութիւնը ծագել է քը-
 րիստոնեական եկեղեցու ազդեցութեամբ, նախ-
 կին յօգուածներում և սակայն մասնանկշ ենք
 արել այդ կեանքի վերայ: Աղքատութեան շա-
 փազանց զարգացման առաջն աննկու համար
 պետութիւնն օրէնքներ և այնպիսի հաստա-
 տութիւններ է հիմնում որ մասնաւոր անձանց
 կարողութիւնից բարձր է: Նա ձգտում է աղ-
 քատների համար եղած օգնութեան գործը
 այնպէս կազմակերպել, որ ընդհանրութեան
 վիճակն և ս զորանով թիթեանայ: Սակայն
 այս սկզբունքները ինքնբարեկեան համակրելի
 լինելով հանդերձ՝ վտանգաւոր կարողութից ազատ
 չեն: Պետութիւնն օրէնքի միջոցաւ հարկադրելով
 աղքատներին օգնել, գործնով իրաւունք է
 տալիս աղքատին օգնութիւն պահանջելու:
 Այդ է պատճառը, որ նշանաւոր պետական
 մարդիկ շատ հիմնաւոր առարկութիւններ են
 արել աղքատների խնամատարութեան գործը
 պետական զարձնելու գեմ: Երբ պետութիւնը
 օրէնքով ապահովում է աղքատների վիճա-
 կը, թողիքի և ձերբերկ համար ապաստանա-

* Տես Արարտ 1898 թ. հասար է. եր. 288: